


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ
Տարեկան . . 12 Ձր.
Վեցամսեայ . . 6 "
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Երկու թիւ մեկ ծրարով
Տարեկան . . 14 Ձր.
Վեցամսեայ . . 7 "
ԱՍԵՐԻԱ
Տարեկան 2,60 Տօլար
Վեցամսեայ 1,50 "
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԳՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՏԵ

Rédaction du journal

"Iravounk"

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

"Иравункъ"

ВАРНА (България)

Գրութիւնք եւս
չեն տրուիր

Երանուշիկ տղա
20 ւանդիով

ՓՈԽԹԱՅԷՐ ՆՊԱՍՏԵԼ

Ռուսիայէ թուրքիոս վերադառնալ ստիպուած զժողովոս հայ գաղթականներուն նպաստելու մեր ձեռնարկը, ուրախ ենք յայտարարել թէ, շիրմ համակրանք ունենալով, իսկ սիւնակներու մէջ հանգանակութեան էջ մը բանալնու հետեւեալ օրը յաջողեցանք Հոգատար Թանձնատու մը կազմել՝ հետեւեալ չորս անձնաւորութիւններէ.

Տեարք

Ն. Քէստանեան, Ատենապետ
Գ. Սահաթեան, Գանձապետ
Թ. Ճանկիւրեան
Թ. Ճամբեան,

Որոնք բարեհաճութիւնը ունենան այս գերազանցապէս ազգասիրական ու մարդասիրական նպատակին համար թատերական շքեղ երեկոյթ մը սարքելու ծանր հոգը ստանձնելէ զատ, արդէն սկսուած հանգանակութեան յաջողութիւնը ապահովելու նպատակաւ, մեր հրաւերին գործնականապէս պատասխանելով, մնայուն կերպով իրենց աջակցութիւնն ալ նուիրել:

Արդ, անտանելիօրէն տառապող մեր գաղթական եղբայրներուն դառն վիճակին ըստ կարի դարձան մը ընելու մարդասիրական պարտականութիւնը ըմբռնող անձնաւորութիւններէ կը խնդրուի որ իրենց նպատակները փութացնեն, մինչեւ յառաջիկայ Դեկտեմբեր 15, Հոգատար-հանգանակչ Յանձնախումբի Տ. Գանձապետին, որուն հասցէն է՝

Տ. Եղբարք Սահաթեան
(Պուլխարիա) Վառնա

Դեկտեմբեր 15էն անմիջապէս յետոյ հանգանակութեան ցանկը պիտի գոցուի և արդիւնքի գուժարը պիտի զրկուի ուղղակի կողմէս, ուրտեղի Թանձնախումբին հետ տեղւոյս Թանձնախումբը բանակցութեան մէջ կը գտնուի:

ԳՈՒՐՊԷՐ

ՆԱՄԱԿ ՀԱՅՐԵՆԻՔԷՆ

ԳԴԻԻ ՄԷԿ ԳԻԻԴԷՆ, 8 Սեպտ.

Որդեակ իմ Ա. Կ.

Տղաս, ձեր նամակը պոռ թուիս 26 թիւ, կը հարցնես թէ գիւղը ով մեռած է:

Գիւղը երիտասարդ տղայ չկայ. կը նային ու ժակարող տղաքը կը սպաննեն: Ահ ու սարսափ, չէնք կրնար երթալ մինչեւ Ճերմակ գիւղ, որ կէս ժամ հեռու է: Արտերը ամբողջը առանց ցանի մնացին: Այդ տղերքն եկող մուհաճիւր թիւրքեր փլաղեցին արտին վրայ տուն չիւնցին. փախ արտերը, տանձնատանը ամբողջ կը տրեցին. Հունտեղէն չկայ գեղերնիս, մուխ չկար. լահանայով և խոտերով օր կանցնէք. հացի երես տեսած չունինք:

Տղաս, ճրագ վառած չունինք. իրիկունները մութ ախոռները կը նստինք. Չարեքցի աշիրաթ, Հոնանցիք ամբողջ գիւղիբու աղջիկներուն ու հարսերուն կը տիրանան աշքեարէ: Ան քիւրտը՝ որ անօթի էր, հիմա աշքեարէ կըսէ «աղջի հարս պիտի պառկիս քովս առ իրիկուն»: Դու կրնաս ձայն հանել անոր առջեւ:

150 տուն կար գիւղերնիս. հիմա 50 տուն չկայ. Մուհաճիւր թիւրքերը ամբողջ գեղերնիս աւերեցին: Ճերմակ, Ապոլոնա, Տարման, Աղբրգուտ և Ճարգեղ գիւղերը աղջիկ, կնիկ և հարս չթողուցին Հոնանցի քիւրտերը. տան մը մէջ երկու եղ չը գիտուիր:

Եթէ ճար մը չըլլայ, աս տարի ձմեռը սովամահ պիտի մեռնինք: Քրպոզ, Ղան, Աօղիկ, Չանախճի գիւղերու չորը մասցաններուն մէջ նետուած աղջիկներու և հարսերու մերկ դիակներ կը գտնուին...

Ախ տղաս, ախ, մինչեւ երբ սպասէք այդ երկիրները. երեք եղբայր ունէի, եթէ գաս գերեզմանները կը տեսնես. այն աղջիկ թողնես աղուոր հարսներու ուր են. ախ, ախ: Ես 95 տարեկան եղայ. փայտս ձեռքս կառնեմ, երեսի վրայ քալելով քաղաք կերթամ 10-20 փարա կը ճարեմ որ նամակ

գրեմ քեզի: Մեր հողերը ամբողջ քիւրտի և թիւրքի եղան:

Որդի, իմ հացս քեզի չմնայ, վրէժնիդ ուր է: Եթէ գուր կարող չէք, ուս եղէք. ով որ խաչ կը հանէ անոր ոտքը ընկէք, թող մեզ ազատէ: Հոռոմները մէկ երկու անգամ մեր ժամը տեսայ, անոնք ալ մեզի պէս խաչ կը հանեն, մէկ Աստուած կը դաւանեն. օղուլ, ազատիք. գիշեր ցերեկ կուլած ու Աստուծոյ կաղաչեմ, օգուտ չունի. եսիր, գերի եղած ենք, աղջիկով, հարսով միշտ լաց ու կոծ կըլլանք ամբողջ գիւղը, և այսպէս հազարաւոր տուններ, գեղեր աւերակ կըլլան, ու դեռ ուս չէք ըլլար, որո՞ւ կը սպասէք: Պահ մը եկար Ռուսիա, ինչու նորէն Պուլխարիա դարձար. չէր կրնար ըլլալ որ քիչօքնիկ մը առնէիր, մէկ երկու տիւշման չորցնէիր, դուն ալ մեռնէիր. ախ, ախ ինձի, արիւն չկայ վրադ. աշքիս առջեւ ինչքը կընեն. ո՞ր մէկը գրեմ. շատ ունիմ գրելիք, միւս նամակին. շատեր կը վախճան չեն գրեր, չենէ տասը նամակ կը զրկեմ:

Աննա

ՀԱՅՈՒՆԵԱՅ ՄԻԱՅԵԱԼ ԲՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Պարտեւհայերու կրթական վերածնունդին մասին մեր յոգնութեան մէկուն մէջ, առիթ ունեցիր էինք Մուհաճիւրէտտին Շահին բարձր հովանաւորութիւնը վայելող Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան գործունէութեան վրայ խօսելու:

Այսօր, կրնանք տեսակին մէջ իրակ հայ կանանց այս ընկերութեան գործունէութեան վրայ աւելի մանրամասն տեղեկութիւններ տալ:

Նախապէս Թաւրիզի մէջ գոյութիւն ունէին Հայուհեաց երկու Բարեգործական Ընկերութիւններ, որոնց մէկը 1895էն ի վեր «Արարատական»ի անունը կը կրէր, իսկ միւսը 1890էն ի վեր «Թաւրիզի» անունը: Այս երկու ընկերութեանց թէ նպատակներն և թէ գործունէութեանց եղանակը՝ աննշան զա-

նազանութեամբ գրեթէ նոյն ըլլալով, շատեր խնդրոյ առարկայ կընէին թէ՛ միեւնոյն քաղաքի մէջ ինչպէս նոյն նպատակներու ծառայող երկու տարբեր ընկերութիւններ կրնային գոյութիւն ունենալ. հետեւապէս, երկու ընկերութեանց Ընդհանուր Ժողովներուն մէջ մէկէ աւելի անգամներ այս ընկերութիւնները միացնելու պարագան վիճարանութեան են. թարկուելէ ետք, վերջապէս 1901ին միութեան անհրաժեշտութիւնը սկզբունքով կընդունուի, ու երկու ընկերութեանց վարչութիւնները, շարք մը գումարամբերու մէջ, միութեան պայմանները կարգադրելով, կը նշանակեն Միացեալ Ընկերութեան անունն ու նոր կանոնադրութիւն մը կը մշակեն, որը երկու ընկերութեանց Ընդհանուր Ժողովներուն մէջ քննուելէ ու վաւերացուելէ ետք, Ամենայն Հայոց Հայրապետին մէկ կոնգրակով ալ հաստատութիւն կրնաւորի:

Ընկերութեանց միութիւնը կատարուած կը հռչակուի 1901 Սեպտեմբեր 10ին ու նոր ընկերութիւնը կանոնաւորի «Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւն»:

Միացման ատեն, «Արարատական» ընկերութիւնը ունէր կանխիկ դրամագումար 25,041 զուան 75 կոպէկ. իսկ «Թաւրիզի» 47,265 զուան 35 կոպէկ. որով միացեալ նորակազմ ընկերութեան դրամագումարը եղած կըլլայ 72,307 զուան 10 կոպէկ, առանց հաշուելու երկու ընկերութեանց սեփական զանազան դասական կամ ձեռագործական պիտոյքները ու Թաւրիզի ընկերութեան Լիւաւայի Թամարեան աղջկանց դպրանոցին նուիրած 30,000 զուան գումարը:

Այս ընկերութիւններէ «Արարատական»ը կը պահէր մանկապարտէզ մը և կարուսէտ արհեստանոց մը, ու Ուրմիոյ, Գերդաբադէի, Դերէլէքէի մէջ մանչերու երեք ուսումնարաններ: Իսկ Թաւրիզի ընկերութիւնը Թաւրիզի մէջ կը պահէր մանկապարտէզ մը և հինգ երկսեռ ուսումնարաններ Դիւզթէքէի և Բարառոյի մէջ, Աղազանի մէջ մանչերու և Ռահվայի

ու իրքի Աղջի մը աղջկանց
դպրոցներ :

Այսպէսով, Միացեալ Ընկերու-
թիւնը, իր կազմութեան միջո-
ցին, իր տրամադրութեանը ներ-
քիւ կը գտնէր դպրոցական 13
հիմնարկութիւններ, զոր որոշեց
անփոփոխ պահել :

Ընկերութիւնը միմիայն ներկայ
տարւոյ ընթացքին մէջ դպրոցա-
կան և բարեգործական զանազան
ձեռնարկներու (որոնց մէջ նաեւ
Մարդիկի արկածներու)
14,311 զուանի չափ գումար մը
նուիրած է. միմիայն ներկայ տա-
րեւրջանի մէջ ընկերութիւնն ունե-
ցած է 117 անդամութիւններ. մէկ
տարւան մէջ, ընկերութիւնը ու-
նեցած է 28 վարչական և չորս
Ընդհանուր նիստեր :

Ինչպէս յայտնի է, Հայուհեաց
այս ընկերութիւնը՝ որուն վարչու-
թեանը կանգնած են Պարսկահայ
բարձր դասակարգի պատկանող
տիկիներ, իրեն նպատակ ունե-
ցած է Պարսկահայ համայնքին
միանգամայն բարեգործական թէ
ուսումնական օժանդակութիւն մը
ընձեռնել. հետեւապէս, մէկ կողմէ
անմիջական ձեռնտուութեանց կա-
րօտ զաղթականներու կամ չքա-
ւոր ընտանիքներու բաւականաչափ
նպաստ սահմանելով հանդերձ,
միւս կողմէ ընկերութիւնը իրեն
գործունէութեանը համար գերա-
գոյն սկզբունք ըրած է տակաւին
տգիտութեան ու նախապաշար-
մանց մէջ միափոխ Պարսկահայ բա-
ղաքներէ անդադար նորանոր դըպ-
րոցներով օժտել, համաձայն ման-
կավարժական ժամանակակից պա-
հանջմանց. իր միջոցներուն թոյ-
լատրած չափով՝ Պարսկահայ զա-
նազան քաղաքներու և գիւղերու
մէջ դպրոցներ, արհեստանոցներ,

ձեռագործական հաստատութիւն-
ներ կանգուն պահելն ալ բաւա-
կան չհամարելով, Հայուհեաց Ըն-
կերութիւնը պատեհութիւնը եր-
բէք ձեռքէ չհանիր նոյն այդ հաս-
տատութեանց մէջ, հանգիստւոր
օրերու առթիւ, հանգէսներ, ժո-
ղովներ, երեկոյթներ կազմակեր-
պելու, որոնք հմայքը կունենան
տեղացի անուս բնակչութեան գէպի
իր ազգային հիմնարկութիւնները
համակրանք ու շահագրգռութիւն
ներշնչելու :

Որպէս զի այս պատուական
Հայուհեաներուն հայրենասիրական
բովանդակ գործը ամբողջութեամբ
բարձունքի, պէտք կ'ըլլար մօտէն
ծանօթանալ Ատրպատականի 35-
40,000 հայ գաւառացի ժողովուր-
դին նիւթական և ուսումնական
ոգրալի կացութեանը :

Ու վերածնութեան այս ջանքե-
րու մէջ, Հայուհեաց Ընկերու-
թիւնը միայնակ ալ կը մնայ.
գամ զի Պարսկաստանի մէջ այս
ծրագրով ուրիշ ընկերութիւն մը,
այր մարդերէ բաղկացած՝ գոյու-
թիւն չունի :

Բարեբախտութիւն մըն է մի-
այն որ, ինչպէս արդէն մէկէ ա-
ւելի անգամներ ըսինք, գործու-
նէութեան ասպարէզը բաց է Հա-
յուհեաց այս ընկերութեան առ-
ջեւ, չնորհիւ Շահին հայասէր
հայապաշտպան տրամագրութեան-
ցը, որ այս ընկերութիւնը իր
բարձր հովանաւորութեանը ներքեւ
առնելէ զատ, երկրին բոլոր կու-
սակալներուն ալ, մասնաւոր ֆէր-
մանով մը հրամաններ տուած է,
որպէս զի Հայերը, իրենց դպրո-
ցական ու բարեգործական ձեռ-
նարկներուն մէջ, ունենան արդիւր-
ջ հանգիստ :

ԴՊՐՈՑԻ ՎՐԱՅՕՔ

Տեղական լրագրողները յայտա-
բարութիւն մը հրատարակեցին
Վառնայի դպրոցական Հոգաբար-
ձութեան կողմէն ստորագրուած :
Յայտարարութիւնը՝ իմացելով
որ դպրոցին քննութիւնները (տա-
րեկան) վերցուած են ալիւս, (իւ-
սուցչական մարմին հետ համա-
խորհուրդ նիստի մը մէջ որոշուած)
կը հրաւիրէր ծնողները, որ զա-
նազան օրեր ներկայ գտնուելով
վերահասու ըլլան դպրոցին կըր-
թական ցիւցակին :

Ահաւասիկ լուր մը որ երեւոյթն
ունենալ կը թուի բերկրանք պատ-
ճառելու՝ բոլոր կրթական գործով
հետաքրքրուողներու տեսնելով յա-
ռաղիմական քաջ մըն ալ այդ էն
կարեւոր մեր մէկ գործին մէջ :

Կարժէ սակայն ըիչ մը աւելի
խորը քննել այդ կարեւորութեան,
որ ունենալ կերեւալ այդ քաջը :

Նախ, սա անմիջապէս յարեմք
թէ, կրթական գործէն որքան ալ
քիչ հասկցող մէկը ըլլայ, անկարելի
է որ չընդունի քննութիւններու
ֆիզիքական գէշ ազդեցութիւնը
մատղաշ տղոց վրայ : Ճիշդ այս
պատճառով, կրթական գործին
մէջ յառաջդիմած եւ այլ եւս հե-
ղինակութիւններ եղած երկրներ
բաւական ատենէ ի վեր քննու-
թիւնները նախակրթարաններէ վե-
րուցած են :

Խնդիր է քննել թէ՛ մեզի հա-
մար ալ օգտակար է այդ բար-
ձումը :

Այս երկիրներուն մէջ, ուր դըպ-
րոցները քննութիւն չունին, գի-
տէ՞ք ինչիւր ունին ատոր փոխա-
րէն : Նախ կրթական նախարա-
րութիւն մը, յետոյ կրթական

խորհուրդ մը, կրթական տեսուչ
մը, կրթական քննիչ մը, բոլոր
ասոնք դպրոցէն դուրս. իսկ դըպ-
րոցէն ներս՝ վարժապետանոցէ
վկայեալ տնօրէն մը. ու պատ-
րաստուած ալ ուսուցիչներ : Ու
բոլոր ասոնցմէ զատ լաւագոյն
ծրագրողներ, մրցումով որոշուած
դասագրքեր եւ տիպիքիւ ունե-
ցող ու հասկցող ալ ծնողներ :

Մենք հայերս, մանաւանդ Պուլ-
կարիոյ մէջ, ի՞նչ ունինք քննու-
թիւնները վերցնելու համար : Հո-
գաբարձութիւն մը եւ ուսուցիչներ
միայն (ծրագիր ու դասագրքեր
չեմ ուզեր յիշիլ, որոնց վրայ
այնքան պրուած են արդէն) :

Ի՞նչ են մեր Հոգաբարձութիւնը :
Սքանչելիօրէն հոս՝ դոտ երիտա-
սարգեներ, թանկագին աւամիսիս-
քաքեռներ, որ չի գոյն «գոյն»
կը ստեղծեն ու դպրոց ըսուած
հաստատութիւնները բոց կը պա-
հեն. բայց այսչափ միայն. որով
հետեւ, մեծ մասը կամ գրեթէ բո-
լորը դպրոցական գործէ կը հաս-
կնան այնքան, որքան Քէլ-մէլի
յետին քառիքաքիշիւքսք պիտի
հասկնար Ռաւմպրաւտէն :

Անցնինք մեր ուսուցիչներուն :
Է՛ն լաւերը, է՛ն խանդոտները ե-
ղած են, — ու ասոնք է՛ն քիչերն
են. — բայց հոսանք ոչ պատրաս-
տուած ըլլալ կը նշանակէ եւ ոչ
արուեստին գիտակցի իսկ մնաց-
եալները, մեծ մասը՝ ամենքիդ ալ
գիտէք ու կը ճանչնաք, չարժեր
իւրաքանչիւր աշուհն առանձին ա-
ռանձին թուել, ու դարձեալ ա-
մէնքիդ ալ, ինծի նման, համազ-
ուած էք թէ՛ ուսուցիչէ զատ ա-
մեն բան կրնային ըլլալ ատոնք :
Բայց չեն ուղած ըլլալ :

Ու ասոնք ամէնքն ալ նախա-
կրթարանէ բարձր դպրոց մը տե-

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

(34)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԼՈՒՍԻԱ ԵՒ ՎԱՆԱԿԱՆ

Լուսիա զողողաց ու չկրցաւ պատասխանել :
Քիչ մը հանգչելէն ետքը, ոտքի ելան ու գէպի
վանքը դիմեցին :

Գիշերը բաւական յառաջացած էր, երբ պարիս-
պէն դուրսը, ծառաստանին քով շինուած խրճիթին
դուռը հասան ու կամաց մը դարկին :

Խրճիթին դուռը բացուեցաւ :

— Մի՛նակ ես, Մո՛նթ, հարցուց Վանական ցած
ձայնով մը :

— Մի՛նակ եմ... հայր սուրբ՝ ժամը մը չափ սպա-
սելէ ետքը, թողուց գնաց, պատասխանեց զուռին
մէջ կեցող մարդը, որուն Մոնթ անունը տուաւ Վա-
նական :

— Չե՛ս կրնար կանչել, ընդհատեց Վանական :

— Ի՞նչու չէ... :

— Պարիսպին դուռը պիտի բանա՞ն :

— Ես բանալ կուտամ :

— Շատ աղէ՛կ, սիրելի Մո՛նթ, ուրիշն մի՛
սպասել : Կարելի չէ ըսիք մը ունիմ :

Վանքին երիտասարդ Մոնթը, որ հազիւ քսան-
ու թը տարու կար եւ կուշտիկ հասակ մը ունէր՝
իր թխագոյն հագուստին մէջ ծածկուած, պահ մը
Վանականին ընկերացող անծանօթին վրայ նայե-
ցաւ ու աճապարեց հրամանը կատարելու :

Վանական ու Լուսիա ներսը քաշուեցան :

Այդ ցածուկ ու մէկ յարկի վրայ շինուած խր-
ճիթը վանքին ծառաստանը նայող պահապանին
յատկացուած է, որ թէեւ անշուք էր, բայց բո-
ւական մարդու էր անոր ներքին կարգաւորու-
թիւնը :

— Ի՞նչ կոկիկ նկարագիր մը ունի եղեր քու
Մոնթը, մրմնջեց Լուսիա թրթռուն ձայնով մը :

— Այո՛, շատ մաքուր է, նկատել տուաւ Վա-
նական : Ժամանակ մը հոգի տուաւ որ սարկաւազ
մը գոնէ՛ ձեռնադրուէր : սակայն չյաջողեցաւ :

— Ի՞նչու համար... արդեօք կարգով չգիտեր :

— Գիտէ՛. մանաւանդ զարգացումը բաւական
տեղն է : միայն թէ անզուսպ բնաւորութիւն մը
ունի :

— Ի՞նչ է այդ բնաւորութիւնը :

— Վարդապետներուն հնազանդիլ չգիտեր : Ըսել
կուզեմ թէ կըրթու է ու երբեմն արարողութեան
մէջ անգամ ամեն բան ոտնակոխ կ'ընէ : Ահա՛ այդ
պատճառաւ ծառաստանին պահապանութիւնը տուած
են իրեն :

— Եկեղեցական գործերու չխառնուի՞ր :

— Ուղած ժամանակ կերթայ դպրութիւն ընե-
լու :

— Վստահելի մէ՛կն է :

— Այդ մասին կասկած մը չունիմ :

Ուսակցութիւնը վերջացած չէր, ահա՛ Մոնթին
առջեւէն մեծափոր ու յաղթանդամ վարդապետ մը
ներս մտաւ ու Վանականին մօտենալով մրմնջեց .

— Վանքին մէջ լրտես մը ունինք :

— Լրտես մը :

— Այո՛ :

— Այսօր եկած է :

— Երկու օր է որ հոս կը գտնուի :

— Ո՞վ է... ես կը ճանչնամ՝ զինքը :

— Կը ճանչնաք... :

— Ո՞վ է... :

Հաստփոր վարդապետը զողողալով Վանականին
ակնաճիւղի վրայ փախաց .

— Լաւքել էֆէնտին է... :

— Առաքել էֆէնտին... կրկնեց Վանական մոլո-
րագին նայուածք մը պատգուելով չորս կողմը :

Ե՛րբ երթալու դիտաւորութիւն ունի :

— Կարծեմ թէ այս գիշեր պիտի մեկնի :

— Որո՞ւ հետ կը տեսնուի :

— Չե՛ս գիտեր :

— Հա՛, Սրբազանին հետ Կանանկ չէ՞ :

— Հարկա՛ւ... անկից զատ որո՞ւ հետ կրնայ
տեսնուիլ :

Վանական պահ մը լռելէ ետքը, յարեց .

— Հիմակ տեղդ գնա՛... բայց ուշադրութիւն
ըրէ՛ որ անպատճառ իմանաւ ատ վատին ո՛ր ատեն
մեկնելը :

— Շատ աղէ՛կ. եւ կերթամ ու անքուն պիտի
հակեմ, մինչեւ անոր երթալը... մրմնջեց հաստփոր

սած չունին. խիստ քիչերը կան, որոնք երկրորդական գործի մը քանի մը դասարանները մտած են. բայց բոլորն ալ երբեք վարժապետանոց մը եւ նոյն իսկ կը կասկածիմ թէ՛ իրենց գործերուն մէջ, ընկերավարական պոռնիկներու մօտ մանկավարժական թերթի մը հին ցած մէկ քանի թիւերը գտնուած ըլլան:

Արդ՝ այս պայմաններուն մէջ չեմ կրնար բնաւ ընդունիլ քննութեանց վերցուելուն օգտակարութիւնը:

ՀԱՅ ՄԸ

(Մնացեալը յաջորդով)

ՅԱՆՑԱՆՔԸ ՈՐՈՒՆ Է

Է.

Պաշտօնիքն երեսուն կողմէ

Բաւական ժամանակ անցած էր, այնպէս որ շատեր իսկ գրեթէ մոռցած էին 28 անուակի խաչագողութիւնն եւ թէ շատերը ճշդ չգիտէին մեր խաչագողի խաչագողի «ապացուցութեան խաչագող» անունով:

Ինչպէս միշտ ըսած ենք, դարձեալ կը կրկնենք. «ճշմարտութիւնն եւ անկեղծութիւնը» վաղ թէ անագան երեսուն կողմէ:

Հանրային խնդրոյ մը առթիւ ատանաբար Պ. Յ. Ս. Փափագեալին հետ կը խօսէինք իրենց տան մէջ. այդ խնդրոյ առթիւ մեր խօսակցութիւնը վերջացնելէ վերջ, Պ. Յ. Ս. Փափագեալն ինքնաբերաբար մեր ինկած վարդօ մարդուկի խօսքը բացաւ. որովհետեւ ինքը լաւ գիտէր թէ, 28 անուակի եւ Տիկնանց մասնախմբի խաչագողութիւնները հրապարակողներէն մին եւ եղած էի եւ խաչագող բառը եւ խառնակած էի այդ մարդուկի ճակատին: Ուստի մասամբ սկսեց զիս դատապարտելով:

տել թէ, աներաւ էի այն խնդրոյ մէջ, զի ամբողջ պատասխանատուութիւնը վարդոյ վրայ թողուցի:

Բնական էր որ ես պիտի հետաքրքրուէի եւ իմանալ ուզէի թէ որքիչ որոնք են յանցաւորները: Ուստի Պ. Փափագեալն հարցումիս պատասխանեց սապէս.

«Պարկազի 28 անուակ զէնքերը ծախուելու համար ժողովր մեր տան մէջ ըրինք: Դաշնակցութեան կողմէ մասնաւորապէս եկած էր Եանպօլէն զեղադործ Գարեգինը. վարդօն արդէն ընդհանուր ներկայացուցիչ էր. ժողովին ներկայ էին Տօքթ. Աթաբէկեան, Արմէն Գաբար եւ այլն: Խնդիրը արդէն զէնքերը ծախուելուն վրայ էր. ես ու Տօքթ. Աթաբէկեան զէնքերու ծախուելուն համաձայն չէինք. իսկ մնացեալներն ամէնքն ալ կը պնդէին թէ պէտք է ծախուին: Գոհարեան պնդեց թէ՛ եթէ այդ զէնքերը Պարկազի մէջ ծախել հնար չըլլայ, ես զանոնք դիւրութեամբ կրնամ ծախել Եանպօլի մէջ: Ժողովը վերջացաւ. ես կարծեցի թէ Տօքթ. Աթաբէկեանի հետ համաձայն գտնուելն իր արդիւնքն պիտի ունենար: Մեր ժողովէն վերջ բաւական ժամանակ անցած էր. Պարկազէն ինձ կը գրէին թէ զէնքերը ծախուել սկսած են, իսկոյն վարդօն տուելու կանչել տուի եւ խնդիրը իմացուցի իրեն. իսկ վարդօն «ես տեղեկութիւն չունիմ» ըսելով խնդիրը վերջացուց: Ուրեմն վարդօն ձեր ըսածին չափ դատապարտելի չէ, քանի որ վարդօյն զատ ուրիշներ ալ կը պնդէին թէ, պէտք է ծախել եւ ծախեցին: Անշուշտ ըսածներուս ճշմարտութեան կը հաւատաս, այնպէս չէ»:

— Ես բնաւ կասկած մը եւ անվստահութիւն չունիմ ձեր ըսածներուն. բայց դուք ինչով զիս կը դատապարտէք, քանի որ պիտոս ինծի իր նախակով կը յանձնարարէր գողները գտնուելու եւ Ռոստոմի հետ միշտ թղթակցիլ: Նմանապէս ալ պիտոս շնորհակալութիւն կը յայտնէ ինձ աշխատութեան փութարէն: Ես պիտոյին եւ Ռոստոմին գրեցի. վարդօյն ու Առաքելին ըսի թէ, այս գործին մէջ

զաղտնիք մը կայ, շնորհակալ եմ Պ. Փափագեալին որ այդ գաղտնիքն դուք պարզելու ազնուութիւնն ունեցաք:

Յ. Կ. ՃԱՆԿԻԼԵԱՆ

(Շարունակելի)

ԱՋԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ժամանակին Լ'Առնէնիէ առնելով հաղորդել էինք Ֆրանսացի կոմսուհի Գօլօնայի Բարիդի մէջ հայ Որբանոց մը հիմնելու մտադրութիւնը. էսդ Ոռնէնի թէեւ այս լուրը հերքեց, բայց այժմ կը խոստովանի այդպիսի գաղափարի մը գոյութիւնն ունենալը. Լ'Առնէնի կըսէ թէ Որբանոցը Նօպիլ-լը-Կառնի մէջ պիտի բացուի. Պ. Մ'աբ սուտ փափագեան Ռուժանիա ու զարկուել է՝ մասնաւորապէս որբեր գտնելով Բարիդ տանելու համար. այդ որբերը պիտի ընդունուին ու պիտի խնամուին Նօպիլ-լը-Կառնի մէջ, Տ. Թադէոս փափագեան «քահանայի» ու կնոջը կողմէ. Բարիդի Պարսկական դեսպանատան ղեկավարական կցորդ զօրավար Արշակ խան գիմեր է կոմսուհի Գօլօնայի, որպէս զի Պարսկաստանէ տասնի չափ որբեր բերել տայ:

Այս բարենպաստակ հիմնարկութեան բարերարութիւն, որ Ռուլիշ Տէօրօք հանդէսին տնօրէնութիւն է, իր նպատակը Պոլսոյ մեր Պատ. Բարերին ալ ծանօթացուցած է. այդ գիմերին վրայ, Բարիդի հոգեւոր հովիւ Տ. Վրամշապուհ քահանայ ու Պ. Կարապետ Սվաճեան, Օրմանեանի կողմէ, նոյն կոմսուհիին հետ տեսակցութիւն մը ունեցած են:

Լ'Առնէնի, ուրկէ այս տեղեկութիւնները կը քաղուի, նոյնիսկ

կոմսուհիէն այս լուրերը առած ըլլալը կը յայտարարէ:

— Բոլոր Առնէնիի խմբագրապետը՝ Բիէն Գիլառ, նոյն թերթի վերջին պրակին մէջ՝ անհարկելով թուրքիոյ մէջ մեր յեղափոխականներու մասնակի շարժումներուն՝ հետեւեալ կարծիքը կը յայտնէ, որը տարիներէ ի վեր մենք ալ պաշտպանել ջանացած ենք.

«... Բայց հարաւոր է որ մտածմունքի կամ գործունէութեան ոչ մէկ ոյժ անօգուտ տեղը վատ. նուրի Մ'եր հայ բարեկամները գուցէ իրենց ջանքերը պէտք եղածին չափ չգաւազարգեցին. անոնք մերթ իրենց աշխատանքը ընդունայն վատնեցին, ու մեզի համար մեծ ուրախութիւն մը կը ըլլայ նախատեսել թէ ապագային մէջ ալ այսպէս պիտի չըլլայ. թող հայերը մեզի ներքին որ, մեր գործին ձեռնարկելէ առաջ, իրենց այս մաղթանքը ընենք, քանի որ մենք մեզի սկզբունք ըրելու էինք այս էջերուն մէջէն վտարել ապարդիւն եւ վտանգաւոր ամէն մէկ»:

— Նոյնմբեր 1 թուակիր Հնչակը ստացածք, ուր Հնչակեան կուսակցութիւնը պաշտօնապէս կը յայտարարէ թէ Չմիւսկոյ մէջ Պալեօզեանը սպաննողը ոչ մէկ կապ ու առնչութիւն չունի Հնչակեաններու հետ: Արդէն մենք ալ այդպէս ըլլալը գիտէինք, մասնաւոր թէ Պալեօզեանի ու Ժամհարեանի դէմ գործուած ռմբակները ծախահարողները եղան միմիայն Դաշնակցական թերթերը. ասանցմէ դուրս, բոլոր հայ թերթերը առանց բացառութեան պէզաք յայտնեցին:

— Իրօշակի վերջին թիւին մէջ կը կարդանք թէ Մ'ելզոն Գէօսեան անուն սափրիչը մահուան դատա.

վարդապետն ու մեկնեցաւ:

Մոնթը Լուի եւ ուշագիւր կերպով շարունակ անծանօթ երիտասարդը կը զիտէր ու կը սքանչանար անոր գեղեցիկ հագուաներուն վրայ:

— Ինծի նայէ՛, սիրելի Մոնթ, ընդհանրեց վանական. տաք տարի է որ հոս կը գտնուիս, ի՞նչու համար սարկաւազ մը չեղար:

— Մոնթը ժպտեցաւ ու հեգնական ձեւով մը պատասխանեց.

— Անո՛նք որ վարդապետ եղան՝ ի՞նչ չա՛հ մը ունեցան...

— Վարդապետը՝ վարդապետ է... բարձր անուն մը ունի:

— Մոնթն ալ՝ Մոնթ է... թո՛ղ բարձր անուն մը չըլլայ: Անպատճառ մարդ կոչուելու համար բարձր անուն մը պէ՛տք է:

— Չէ՛, սիրելի Մոնթ, ըսել չեմ ուզեր թէ մարդ ըլլալու համար անպատճառ բարձր անուն մը պէտք է քեզի. այլ ուրախութիւն մը պիտի գտայի եթէ այդ հագուաներուդ տեղ՝ աւելի փայլուն սքեմ մը ու թաղիքէ գտակիդ տեղ՝ վեղար մը տեսնէի ըստ վրադ:

— Աղէ՛կ... ըսել կուզես թէ ձեռքերս կապուած խրտուիլակ մը ըլլայի, անանկ չէ՞:

— Միթէ՞ վեղարաւոր վարդապետ մը խրտուիլակ մըն է:

— Հապտ ի՞նչ է: Ազատ է ինծի պէս: Կր՛նայ ուզած ժամանակ պաշտած Ս. Գործին համար աշխատել, կրնայ լեռը վազել, քաղաքը թափառել, մէկ խօսքով՝ Յեղափոխական մը ըլլալ:

— Վարդապետը չկրնայ Յեղափոխական ըլլալ:

— Պա՛հ... հարկաւ չկրնար:

— Ի՛նչու:

— Անոր համար որ տառապիլ, չարճաւոր, չարճաւոր կերպով ապրիլ չեն ուզեր Յեղափոխականներու պէս: Աս վանքերու մէջ եղող վարդապետներուն տուրի՛ր նոր վեղար մը ու կանաչագոյն սքեմ մը. ա՛լ ուրիշ մտածում մը չեն ունենար. կուտեն, կը խմեն ու կը պառկին: Ես այդ տեսակ կեանք մը չեմ սիրեր: Ես կրնա՛մ կուղծ, գործ կուզեմ...

Վանական ու Մոնթը շարունակ կը խօսէին. իսկ Լուսինա մէկ անկիւնը քաշուած մտիկ կընէր:

— Ան չէ՛, յարեց Մոնթը զարմանքով մը, ո՛վ է սա մարդը:

— Բարեկամս է... պատասխանեց Վանական:

— Մոկացի՞ է:

— Այո՛, Մոկացի է, սիրելի Մոնթ:

— Օ՛հ, ի՛նչ գեղեցիկ է անոր հագուստը: Շիտակը կը զմայլիմ:

Յետոյ դառնալով զէպի Լուսինա՛ Մոնթը հարցուց.

— Ուրիշ տեսն տեսած էիր մեր վանքը:

— Ո՛չ, չէի տեսած, մրմնջեց Լուսինա:

— Ի՛նչ օգուտ... գիշեր է, հիմակ բան մը չես կրնար տեսնել... եթէ ցերեկ տեսն ըլլար, բոլոր ծառաստանը կը տանէի քեզ:

— Շնորհակալ եմ... թոթովեց Լուսինա, ջանալով կեղծել իր կանացի ձայնը:

Այս խօսակցութեան միջոցին, կամաց ձայնով չլոց մը լսուեցաւ դուրսէն:

— Երթա՛նք... մրմնջեց Վանական:

Ու՛ Լուսինային հետ խրճիթին յետակողմէն զէպի

(Շարունակելի)

պարտուած է, կուսակցութեան պատկանող 10 հատ զէնք իւրացուցած ըլլալուն պատճառաւ: Բայց Պ. քաղաքի 28-ամեակի և Տիկնանց Մասնախումբի գողերը տակաւին ազատ կր պոտին, այն ալ գեռ յեղափոխականի դիմակին տակ:

— Մշոյ, Աղթամար, Շապին Գարահիսարի և Զլշկածակի առաջնորդարանները իրենց այրերէն լքուած կիներ և մասին ընդարձակ տեղեկագիրներ եւ ցանկեր զրկած էին Պատրիարքարան: Կրօն. Ժ. զոգր իր վերջին նիստին մէջ նկատի առնելով այդ պաշտօնական գրութիւնները, որոշած է զանոնք վճի. կաթողիկոսին ներկայացնել եւ անմիջական կարգադրութիւն մը խնդրել այդ լքուած հայ կիներու վիճակին համար:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ի ՆՊԱՍՏ ՏԱԿԱՎԱՅՑԱՆԵՐՈՒ

Գ. Յոռցակ

Բ. ցուցակի գումար	15 ֆ.
Տ. Պ. Յովհաննէսեան Ռո. սչուք 3 »	
» Պ. Ճիւղբեան Վառնա 5 »	
» Մուրադով քննիչ պանգայի 5 »	
Տօք.Յ. Բաշեան »	3 »
Գումար	31 »

ԻՄՏԱՏ ՎԷ ԻԱՆԷ

Գըշկընար էսնաւորտա Բուսի ալա իլթիճա իթմիշ օլան միլլէթ տաշարըմըզ վաթանա ավտէթ իթմէք մէգպուրիլէթի իլէ Բուսի թիւք հուտուրնտա սէֆալէթի ազիմէյէ կիրիթթար օլտըզլարն տան, անլէրի աճ վէ չրպլլագ էօլ մէքտէն գուրթարապիլմէք իչիւն, Բուսիտա վէ սալիթ թարսֆլար տա իանէ տէֆթէրի քիւշաւ օլ ընտըզը կիպի, պուրտտան տախի պիզ իանէյէ թէշկպպիւս իթտիք: Վէ մաէլ մէմուռնիլէ պէյան իտէ. ըիզ քի՝ շէհրիմիլ թիւճարանըն տան պիր գաշ զէփաթտոն պիր գօմիսիօն թէշքիլիլէ մուվաֆազ օլընտը: Իշպու գօմիսիօն Դեկ. տեմբեր 15ինէ գատար պիր միւտ. տէթլէ տէֆթէր աշմըշ օլուպ, օլ թարիլի տէկիլն թէճէմիւ օլընան իանէյի մահէլիլնէ կէօնտէրէճէք. շու հալտէ միլիլիլթ ու ինսանիլթ նամընա պէտպիսիթ միլլէթտաշ. լարըմըզ իանէ կէօնտէրմէք իս. թէյէլէր Դեկտեմբեր 15ինէ գա. տար շու աւորէսէ եօլլամալը տըր. լար:

Մ. Սահարախան Պիրաւտըրէր Վառնա

Բուսիտան ավտէթ իթմէքտէ պուլընան մուհէճիթ միլլէթտաշա-

ըմըզա իանէթէն՝ տիւն կիճէ «Սանթրալ» սալօնընտա իճրա օ. լընան թէշաթրօ՝ միւսէպպիլէր իչիւն՝ պէօյիլք պիր մուվաֆազիլէթ իտի: Սալօն խրճա խընճ տօլմուշ վէ միլլէթին հէր սընթթը մէվ. ճուտ ըտը. տիկէր միլլէթլէրէ տախի մըզտարը քեաֆի պիլլէթ. լէր սաթըլմըշ րտը. 700 ֆրանգա գատար հասըլաթ զանն օլընըյօր: Թէշաթրօ գուրմանեաւընըն՝ հա. զըրուշը մէմուռն պըրազմազ իչիւն իպրազ իթտիկի սալ ու զալլէթի ինքեար օլընամազ: Պիլլէթլէրին ֆիրուլաթի վէ սալիթ խըտմէթլէր իչիւն գօմիսիօն ազալարըն վէ տի. կէր պազը զէվաթըն իգտամաթընա հէզարան թէշէքթիւր:

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ
ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Մաքէթոնիա իւրախարը

Մաքէթոնիտա պազը թէպտի. լաթը իտալէ իչիւն՝ Պապը Ալի. տէն միւսաիպ կէօրիլէն վէ Սուլ. թանտան թաստիգ օլընան ճէտ. վէլ Սթանպօլ թիւք կազէթալա. ընտա ըէմէն միւնտէրիճ օլուպ, միւթալէաի աճիզանէմիզ օլմուշ տըր. պու թէպէտտիլաթըն պաշ լըճալարը շուշլար տըր:

1. Ժանտարմալար խրիսթիան. տան վէ իսլամլարտան գարընըզ օլաճագ:

2. Ճէզա մահքէմէլէրի հուգուզ մահքէմէլէրինտէն ալըլուպ, ճէ. զանըն ըէյիսի գատը օլմալաճագ, վէ ազալարըն նըսֆը միւսլիմ վէ տիկէր նըսֆը զալըր միւսլիմ օլա. ճագ:

3. Ժանտարմալար զապիթլէրի վալի. նին ինհասը իւզըր Պապը Ալիտէն նապ վէ ազլ օլընաճագ տըրլար:

4. Հէր պիր վիւալէթտէ վսլի. նին նէզտիլտէ պիր խրիսթիան գալմազամ պուլընաճագ:

5. Մահքէմէլէր քիւսէնին վէ հիշ պիր մագամըն թէշէսիթի ալ. թընտա պուլընմ սալագ վէ հէր պիր տապալը աւտիլանէ մուհաքէմէ իթ. մէք իչիւն հիւր վէ սէրպէսթ օլա. ճագլար. գանուսա մուսալէֆէթ իտէն աւտիլէ մէմուրլարը շէտի. տէն ճէզալանաճագլար, Պուշլա. ըրն իւզէրինէ վալիլէր քէնտիլէրի նէզալէթ ու տըզգալթ իտէճէթ. լէր:

6. Տէօվլէթ թարաֆընտան պիր ումուսի միւֆէթթիլ թալին օլը. նուպ, պու աքթէրիլէ վէ միւլթիլէ մէմուրլարըն եարտըմը իլէ իսլա. հաթըն իճրասընա նէզալէթ իտէ. ճէք:

7. Միւֆէթթիլտէն տահա եիւր. սէք Պապը Ալի թարաֆընտան իւշ ազատան իպարէթ պիր գօնթ. րօլ գօմիսիօն թէրթիպ օլընաճագ, իշպու գօմիսիօն վալիլէրին վէ ումուսի միւֆէթթիլին ըաբօրթ:

լարընը դապուլ վէ թէտգըր իտէ. ճէք վէ անլէր իլէ մուսապէրէտէ պուլընաճագ վէ մէսէլէլէրի պիւա թէշէսիթ սատրազամա թագտիմ իտէճիք տիր:

Վէ սաիրէ վէ սաիրէ:

Էվվէլ տախի տէմիշ օլտըրմըզ իւզըրէ, պու եօլտա թէպտիլաթլէ Մաքէթոնիտան հալի թէշաթին օլընամազ: Սթանպօլտան թաւաւ վէրիլէն պիր թէլէկրաֆ տախի տէյօր. «Տիւրքիսթ տախիլէրին. տէ Մաքէթոնիա իչիւն նէշը օլը. նան իսլահաթա էհէմմիլէթ վէ. ըրլմէյօր: Կազէթալարտա նէշը ի. տիլէն իսլահաթ ճէտվէլիլտէն Պապը Ալի պազը իպարէլէր չը. գարմըշ օլմալընտան տօլալը Բու. սիւ վէ Աւտորիտ խօշնուտ գալ. մամըշլար տըր. շէօլլէ քի. Սուլ. թանըն պիր իրատէսի օլմազա. զըն վալիլէրին հարէթլէթի աքթէ. ըրիլէլէ էմիր վէրէմէլլէճէթլէրինէ տալիլ օլան իպարէլի Պապը Ալի իպահաթ ճէտվէլիլտէն գալտըր. մըշ»:

Իշթէ շու հալ մէզքիւր իսլահա. թըն գաշ կիւն էօմիլ օլաճաղընը իմա իտէր:

Սթանպօլտան տիկէր պիր թէ. լէկրաֆ տէյօր. «Տիւրքիսթ տէօվ. լէթի եէնիտէն Պապը Ալիլէ միւ. ըաճալթլէ՝ Մաքէթոնիա իչիւն թէրթիպ օլընան իսլահաթըն քէ. մաքեան իճրա օլընմալընըն իգ. թիւքաշըն թէշէքիտ իտէրէք տէ. միշ տիր քի, աքթի հալտէ՝ հէր թարաֆտան կէօրիլէն տէլիլլէրէ կէօրէ՝ եէնիտէն իլթիլալա սէպէ. պիլլէթ վէրիլմիշ օլաճագ տըր»:

— Սթանպօլտան պաշգա պիր թէլէկրաֆ տէյօր. «Մաքէթոնիա իչիւն նէշը օլընան իսլահաթ ճէտ. վէլի Բուսիտանըն թալէպլէրինէ միւ. թապըզ տէկիլ տիր: Հէր հալտէ՝ Ֆէրիտ Բաշանըն ըէյսալէթի թահ. թընտա թէշէթիլ օլընան գօմիսիօ. նք՝ ումուսի միւֆէթթիլ չիւսէլին Հիլմի Բաշատան վէ վալիլէրտէն ալաճաղը ըաբօրթլարտան սօնրա՝ վէրէճէկի գարալարը պէքլէմէք իգթիլգա իտէր»:

ՄԻԻԹԷՆԷՎԼԻԹԷ

Հապէշ իմբէրաթօրը Մէնէլիքին գույուճը պաշըսը Պաղտասարեան Յակոբ աղա իլէ վէքիլսալը խա. շատուրեան Նիկողոս աղանըն իւք էվլատը Մ. Ջաւէն պու կիւնլէր. տէ Մըսըր թարիգի իլէ էվրօ. րալա կիտէճէթլէր վէ օրատա իմ. բէրաթօր Միլիլիք իչիւն բէք չօգ շէյլէր սաթըն ալաճագլար:

Միլլէթտաշլարըմըզտան պաշըզ զէվաթըն թիւքիլարտա եիւքսէք մէմուրիլլէթլէրտէ իսթիլտամ օ. լընմալարընը պիր չօգ ճահիլ թիւք. լէր միլլէթիմիզէ պիր պէօյիլէ էյ լիք կիպի թէլազգըր իտէրլէր: Իքի պուշուգ միլիոն էրմէնի պուլընան թիւքիլարտա պազըլարըն եիւքսէք մէմուրիլլէթլէ հալիլ օլմալընըն նէ՝ էհէմմիլլէթի օլապիլիթ. գաշ քի՝

Հապէշիտան, Աճէմիտան վէ Մը. սըր կիպի պիրէր ավուճ էրմէնի պուլընան մէմալիլլէրտէ՝ թիւք. քիտան տահա զիլտալէր էրմէնի. լէր քէնտի մէհարէթլէրի իլէ եիւք. սէք մէմուրիլլէթլէր վէ մէվզը. լարա հալիլ օլմուշլար տըր:

Էթթէտէն պէրու թիւքիլարտա պիր էրմէնի օն թիւքիլին եարա. մալաճաղը իշի եարապիլմէք մէ. հարէթիլի կէօսթէրմիշ օլմալը տըր քի տէօվլէթ մէմուրիլլէթինէ կէշէպիլիլ: Պու հազըզաթը իյ. զահ իչիւն թէմալիլլէրէ իգթիլգա եօգ. վէ իշթէ, հազըզաթը հալ պէօլլէ իքէն, տէօվլէթ պազը էր. մէնիլլէրի մէմուրիլլէթի իսթիլտամ իթմէթլէ տէկիլ միլլէթիմիզէ խա. իրիսալըզ՝ իլլ. քէնտը մէնիլլէթ. թընը կէօզլէթմիշ օլըյօր. պիւսէն ալլէյ օնտան տօլալը՝ միլլէթ տէօվլէթ միլլէթտար օլմալը, աքթի օլարազ տէօվլէթ միլլէթէ միլլէթտար օլմալը տըր քի՝ Գազալ Արթին կիպի ամիրալար վէ Ակոբ վէ Արթին Բաշալար Էիպի մահիր վէ միւզլէթտիր էվլատար տօղու. ըրլօր:

ՎԱՋԻԷՆ, ԵՐԳԱՐԱՆ

600 երեսէ բաղկացած, 300էն ա. լիլի երգեր, նշանաւոր գործիչներու կենսագրութիւններ ու լուսանկարներ կը պարունակէ իր մէջ:

Գոյացած հասոյթը յատկացուած է զուտ բարեգործական գործի մը:

Ամէն դասակարգին դիւրամատչելի ըլլալու համար որոշուած է ծախուիլ 5 ֆրանքի: Դիմել առ 3—16

Յ. Կ. Ճանկիլեան (Պուլկարիա) Վառնա

ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ

Բնիկ Երզնկացի, Մեղուա գեղացի Բերազ Սարգիսեանի երկու որդւոց՝ Արշակ եւ Սիմօն Սարգիսեանի ուր ըլ. լալը գիտցողներէն կը խնդրուի որ խմբագրութեան տեղեկացնեն:

ԱՐՄԵՆԻԱ ԼԻՆԶԻ. — Զ. Ֆ. Բ. Լիւնի, պատկերով եւ ինքնակեն. սագրութեամբ: Դրոց Պ. Տօնապետ. եան. զինն ճանապարհածախով 3 ֆրանք. զիմիլ աշխատասիրողին: 117 4080թիկէ Քօս - Լոնսոն W 3—8

ՁՐԻ ԾՄԵՆՈՅՈՒՄ
ՁԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻՐ

Պաշտօնական ազլերու տղը (25 տաւ) 10 սանդիլմ: Անհասակաւ ազլերու տղը (25 տաւ) 20 սանդիլմ: Երեխանկալեան աշխի համար 20 0/0 զեղչ: Փոխարեկը դրաւ կամ նամակա. որոշմը զրկել կանխիկ:

ՍՐԱՆ "ՍԱՆԴԻՐԱԼ"

Վազը գիշեր նաշիթսա խմբին կող. մանէ պիտի ներկայացուի ՀԱՄԼԷԹ թատերադրութիւնը 5 արար 12 պատ. կեր:

Одговорникъ Н. Драгулевъ

Печ. на Хр. Н. Войниковъ—Варна